ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Ս/թ փետրվարի 15-ին ՀՀ Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը Տաթև համայնքում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Ընդունելությանը ներկայացել է 22 քաղաքացի:

Դրամական օգնություն ստանալու խնդրանքով դիմել էր յոթ, աշխատանքի տեղավորման՝ մեկ, բիզնեսի շարունակման, քարանձավում հյուրանոց և ռեստորան կազմակերպելու, տան տանիքի վերանորոգման, տան կահավորման, ջերմոցի գազաֆիկացման, ինտենսիվ այգու հիմնման աշխատանքների և փոքր ՀԷԿ-ի կառուցման, այգու ջրի և չորանոցի աշխատանքների օժանդակման, կահույքի արտադրամասի հաստոցների ձեռք բերման, ճոպանուղու կողմից սեփականաշնորհված հողի փոխհատուցման, 1հա հողի սեփականաշնորհման, մոմաթերթի հաստոցի վալցի ձեռք բերման, գերեվարված զինծառայողի հաշմանդամության կարգ ձեռք բերելու, բիզնես ծրագրերի, պեմզաբլոկի արտադրամասի տանիքի նորոգման հարցերով՝ մեկական քաղաքացի:

Դրամական օգնության յոթ դիմումներին տրվել է դրական լուծում:

Աշխատանքի տեղավորման դիմումը վերցվել է հաշվառման:

Մնացած խնդիրները մարզպետի հանձնարարությամբ, սահմանված կարգով ընթացք տալու նպատակով, քննարկվում են աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումներում: Դրանց մի մասին ընթացք տալու համար նախատեսվում է նաև ուսումնասիրություններ կատարել տեղում:

ՀՀ Սյունիքի մարզպետարան